ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2024 թվականի N 805 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 898-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի «Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրության, առևտրի, հրաձգարանի գործարկման լիցենզիաներ ունեցող իրավաբանական անձանց, ռազմամարզական և սպորտային հրաձգության կազմակերպությունների կողմից քաղաքացիական ակոսափող և ողորկափող հրազենի փամփուշտների լիցքավորում կատարելու կարգը սահմանելու մասին» N 898-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը, որոշման 1-ին կետը, որոշմամբ սահմանված հավելվածի վերնագիրը, որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը «լիցքավորում» բառից առաջ լրացնել «վերալիցքավորում և» բառերով.

2) որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Քաղաքացիական ակոսափող և ողորկափող հրազենի փամփուշտների վերալիցքավորման և լիցքավորման գործընթացը ներառում է վերալիցքավորվող և լիցքավորվող փամփուշտների բաղկացուցիչ մասերի պիտանիության հետազոտումը, փամփուշտների վերալիցքավորումը, լիցքավորումը և փորձարկումը:».

3) որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Փամփուշտների վերալիցքավորումը և լիցքավորումը պետք է համապատասխանեն քաղաքացիական ակոսափող և ողորկափող հրազենի փամփուշտների տվյալ տեսակի և տրամաչափի պատրաստման համար նախատեսված՝ գործարանային արտադրության պայմաններին: Վերալիցքավորված և լիցքավորված փամփուշտները պետք է հստակ ունենան իրենց տարբերակիչ դրոշմվածքները (վերալիցքավորող, լիցքավորող կազմակերպության կամ գործարանի ծածկագրերը, վերալիցքավորման, լիցքավորման տարեթիվը), ինչպես նաև համապատասխան փորձարկումների արդյունքում հաստատված տեխնիկական բնութագրերը:».

4) որոշմամբ սահմանված հավելվածի 4-րդ կետում «Լիցքավորված» բառը փոխարինել «Վերալիցքավորված և լիցքավորված» բառերով.

5) որոշմամբ սահմանված հավելվածի 5-րդ կետում «լիցքավորման» բառը փոխարինել «վերալիցքավորման և լիցքավորման» բառերով, «լիցքավորող» բառը փոխարինել «վերալիցքավորող և լիցքավորող» բառերով.

6) որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ գլխի վերնագրում «ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆԸ» բառը փոխարինել «ՎԵՐԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆԸ ԵՎ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆԸ» բառերով.

7) որոշմամբ սահմանված հավելվածի 6-րդ և 8-րդ կետերում «Լիցքավորող» բառը փոխարինել «Վերալիցքավորող և լիցքավորող» բառերով.

8) որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետում «Լիցքավորող» բառը փոխարինել «Վերալիցքավորող և լիցքավորող» բառերով, «լիցքավորող» բառը փոխարինել «վերալիցքավորող և լիցքավորող» բառերով, «լիցքավորման» բառը փոխարինել «վերալիցքավորման և լիցքավորման» բառերով, «լիցքավորում» բառը փոխարինել «վերալիցքավորում և լիցքավորում» բառերով.

9) որոշմամբ սահմանված հավելվածի 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

10) որոշմամբ սահմանված հավելվածի 10-րդ կետում «լիցքավորմամբ» բառը փոխարինել «վերալիցքավորմամբ և լիցքավորմամբ» բառերով, 10-րդ կետի 1-ին ենթակետում «լիցքավորման» բառը փոխարինել «վերալիցքավորման և լիցքավորման» բառերով, «լիցքավորված» բառը փոխարինել «վերալիցքավորված և լիցքավորված» բառերով, «լիցքավորվող» բառը փոխարինել «վերալիցքավորող և լիցքավորող» բառերով.

11) որոշմամբ սահմանված հավելվածի 10-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերում «լիցքավորման» բառը փոխարինել «վերալիցքավորման և լիցքավորման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ